

# ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ

## ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

«ՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ Ե—Շ ԴԱՐԵՐՈՒՄ»

### ՅՈԴՈՒԱԺԻ ՄԱՍԻՆ

Մի քանի տարի է որ Երեւանի պետական համալսարանի հայոց լեզուի ամբիոնի դասախոս Սիրաք Գիւլուղիղեանն աշխատում է «Հայերէնի ուղղագրութեան պատմութիւնը» գոկտորական թէմայի վրայ : «Բանրեր Երեւանի համալսարանի» հանդէսի 1971 թուականի երրորդ համարում , էջ 88-105 , առագայ դոկտորը<sup>1</sup> Հրատարակել է Ե-թ դարերում Հայերէնի ուղղագրութեան նկարագրութիւնը : Քանի որ , Հակառակ հեղինակի խոսուման թէ ինձ անպայման կարգալ կտայ իր ամբողջական աշխատանքի ձեռադիրը , ես այսուհետեւ մամուլից միայն կարող եմ ծանօթանալ նրա հետագոտութեան արդիւնքներին , ուստի ստորեւ նրա և բնթերցողների ուշադրութեանն եմ յանձնում իմ բարեկամական դիտողութիւնները նրա ձեռք բերած արդիւնքների առաջին հարաբերակման առթիւ : Թերեւս օգտակար լինեմ նրան , քանի որ աշխատանքը չարունակելի է : Եշելու եմ այն ամէնք , ինչ նկատել եմ : Հետեւելու եմ էջերի հերթականութեանը :

Էջ 88-89 . Ուղղագրութեան եւ նրա տեսակների մասին խօսելուց եւ «Այժմ անցնենք Հայերէնի Ե-թ<sup>2</sup> դարերի ուղղագրութեան նկարագրութեանը» նախազառութիւնը գրելուց յետոյ (կամ առաջ) , լու կը լինէր բնթերցողին յայտնել Ե-թ դարերի ուղղագրական փաստերի համատեղ նկարագրութեան պատճառը : Զէ՞ որ Հինգերորդ դարի ուղղագրութիւնը այլ որակ է յաջորդ դարերի ուղղագրութեան համեմատութեամբ . նոյն սկզբունքները չէին կարող բնորոշ լինել այդ ժամանակաշրջաններում , ինչպէս ցոյց են տալիս հեղինակի իսկ մէջ բերած «շեղումները զասական գրաբարի ուղղագրութեան կանոններից» (էջ 89) : Ուստի կարծում եմ , որ նշեղ չի կարելի համարել հետեւելալ յայտարարութիւնը . «Հայերէնի ուղղագրութիւնը մեզ հետաքրքրող ըլլանում (այսինքն Ե-թ դարերում — Մ . Մ .) բնորոշ է ամէնքց առաջ իր հնչական սկզբունքով՝ խօսիք այնպէս , ինչպէս զրում ես , զրիք այնպէս , ինչպէս խօսում ես» (էջ 89) : Յօդուածում մի քանի անգամ կրկնուած «Հնչական» այս սկզբունքը լաւ կը լինէր սկսել երկրորդ մասից՝ «Դրիք այնպէս , ինչպէս խօսում ես» , քանի որ Հայերէնը , ինչպէս նաեւ բոլոր լեզուները , զրուելուց առաջ խօսուել են :

1 Ես համոզուած եմ , որ յօդուածագիրը իր ջանահրութեան շնորհիւ կը դառնայ բանասիրական գիտութիւնների դոկտոր :

2 Այստեղ եւ յօդուածում այլուր մի քանի անգամ փաքատառ՝ փոխանակ մեծատարի :

կջ 89. Կարգ, աւր և աւա բառերի տառադարձութիւնը կը լինի ոչ թէ  
kard, aur, aul, *այլ karg, awr, awj*:

կջ 89. «Այս դարերի (այսինքն՝ Ե-Թ դարերի — Մ. Մ.) ժամանակ-  
րութեան մէջ նկատում են չեղումներ դասական զբարարի ուղղագրութեան  
կանոններից»։ Ընդգծեցի «այս»ը. Դարերի մասին արդէն քիչ առաջ նկատել  
տուեցի: Շեղումները յօդուածագրի կողմից վերագրում են «անզական բար-  
բառների կամ 'եզերական' խօսուածքների՝ զրիչների վրայ թողած աղեցու-  
թեան»։ Մակայն այս յայտարարութիւնից յետոյ նա որոշ չեղումներ բացատ-  
րում է առնմանութեամբ կամ տարնմանութեամբ, որոնք տեղական բարբառ-  
ներից անկախ զործող ընդհանուր հնչիւնական երեւոյթներ են: Զարմանալի  
է, որ յօդուածագիրը ոչ մի «չեղում» չի վերագրում զրիչների աղխոտութեան  
կամ անփութութեան, հակառակ բանասիրութեան մէջ արտայարուած կար-  
ծիքի:

կջ 89. Ն զրին յաջորդող կ—ի փոխարէն գ—ի օրինակների շարքում  
անտեղի բերուած է նաև «Հայեցարուք ընդ ազուաւ» նախադասութիւնը Լա-  
զարեան ճեմարանի Աւետարանից: Խնչպէս եւ «Նոյն «Աւետարանում»<sup>3</sup> նից  
յետոյ տ—ի փոխարէն դ տառն է զրուած» գիտուած կէտի համար դարձեալ  
անտեղի բերուած են «Փոխանակ մոխրոցն անզառամ ծաղիկքն» բառերը Աղա-  
թանզեղոսի կրկնագիր ձեռագրից:

Երկու «չեղումների» համար, ինչպէս նաեւ ամրող յօդուածում փաս-  
տեր բերուած են Փաւատոս Բուղանդի 1888 թուականի հրատարակութիւնից,  
առանց կասկածելու, որ այդ ուղղագրական «չեղումները» թերեւս գրաշարա-  
կան են: Ստուգուած վիմական արձանագրութիւններից բացի բոլոր փաստերը  
պէտք է քաղուէին ձեռագրերից կամ մեր ժամանակիների ֆնական հրատա-  
րակութիւնների ձեռագրական տուեալներից:

կջ 90. «Ե—ին յաջորդող ձ—ի փոխարէն ծ և մ—ին յաջորդող թ—ի փո-  
խարէն պ է զրուած» չեղումի համար օրինակների մէջ անտեղի բերուած է  
նաեւ «Կամնինեցաւ արձանո» նախադասութիւնը, որից յետոյ ասուած է. «Տա-  
թեսի մի զերեզմանաքարի Յիսուս<sup>4</sup> (895) թուականին (Դիւան հայ վիմագրու-  
թեան, 2 պ. 13):»: Լաւ կը լինէր ասել «զերեզմանաքարի վրայ», նշել «Դիւա-  
ն»ը կազմողի՝ հանդուցեալ Սեղբակ Բարխուզարեանի անունը, հրատարակու-  
թեան տարին՝ 1960, տեղը՝ Երեւան, լրիւ զրել այդ «2 պ. 13»ը, որ այդ հրա-  
տարակութիւնը բացելուց յետոյ միայն հատկացայ, թէ նշանակում է «Երկ-  
րորդ պրակի, էջ 13»: Այս տեղեկութիւններին աւելացնեմ, որ յօդուածագիրը  
իր օրինակը բերել է էջ 13ի երկրորդ արձանագրութիւնից: Մակայն երբ այս-  
ուղի, այսինքն՝ «Դիւան»ի այս էջում կարգացի, որ արձանագրութիւնը զրո-  
ւում է Տաթեսի ոչ թէ մի զերեզմանաքարի, այլ Պօղոս—Պետրոս եկեղեցու  
վրայ՝ «Արտաքուստ, արեւմտեան պատի հարաւային մասի ներքեւում», ըս-  
կըսեցի կասկածել Ս. Գիւլյուղաղեանի՝ նոյնիսկ վիմական արձանագրու-  
թիւններից բերած օրինակների վրայ: Թէ եւ նոյն ինքն ասում է, թէ «Խոկ գի-  
րը, իրեւ քարի, մագաղաթի, թղթի վրայ մարմնաւորուած, զրանցուած լեզ-  
ուական ատաղձ, մնայուն է ու անփոփոխ» (էջ 88), սակայն նրա զրչի տակ ահա  
քարի վրայ զրուծուած արձանագրութիւնն էլ, զիրն էլ ենթարկուել են փո-  
փոխութեան հետեւեալ օրինակում. «Յաւժարութեամբ իմոց կրանաւորաց

<sup>3</sup> Աւելի լաւ է առանց շակերտմերի կամ ներզոյականի —ուժ մասմիկը դրանցից  
դուրս:

<sup>4</sup> Վիմական արձանագրութեան մէջ մեծատակրով՝ Ցեղ:

կարգեցայ եպիսկոպոս Սունեաց զինի տեառն Յիսղ» (Էջ 90) . դարձեալ քաղ-  
ուած է «Դիւմն»ից , այս անպատմ միայն «Դիւմն , 2 , 13» նշումով : Զարմանալին  
այն է , որ «Յաւմարութեամբ իմոց կրանաւրաց» բառերն առնուած են Էջ  
13ի երկու արձանագրութիւնների երկրորդից , իսկ «կարգեցայ եպիս-  
կոպոս Սիւնեաց (ոչ թէ Սունեաց) զինի տեառն Յիսղ» բառերն առնուած են  
նոյն էջի առաջին արձանագրութիւնից , բայց որոշ «խմբագրութեամբ» . իս-  
կականը հետեւեալն է . «Յամբին յորում թուականն Հայոց ՅիշԴ էր . . . կարգեցայ  
եպիսկոպոս Սիւնեաց զինի տեառն Սաղամանի . . . » :

«Կանկնեցաւ արձան» բառերում գ—ի փոխարէն ն—ից յևոոյ դրուել  
է կ , ինչպէս նաև Լազարեան ճեմարանի Աւտուարանի «Ժամանկութիւն» բա-  
ռում . բայց յօդուածագիրն այս փոփոխութեան մասին ոչինչ չի տեէլ :

Էջ 90 . Ռ Եւ Ռ գրերի ուղղագրութեան մասին խօսելիս Գիւլյուղաց-  
եանը զրել է . «Ե—ին նախորդող զիրքում միշտ լինում է ո տառը՝ ձեռն . . . ». «Ե—ից ասած թէ կարող է լինել ա) եթէ ն—յ յօդ է , որովհետեւ այդ երկու բա-  
ռաձայնի միջիւ ը է լաւում՝ սարըն—սարն . . . » : Պատճառարանութիւնը զի-  
տական չէ , քանի որ ձեռն բառի ո եւ ն Հնչիւնների միջնեւ նոյնակա լուսում է  
զարդարանակ ը : Աւելի լաւ է օրինակները ներկայացնել սարն—սարն ձեռով :

Էջ 90 . Ե—Թ դարերի ուղղագրութեան համար օրինակ է բերուած ար-  
նագոյն բառը , որ չունի «Առձեռն» բառարանը : Հին Հայերէնում արիւն բառի  
ածանցման ձեւերի մասին տե՛ս «Արմատական բառարան» , նոյն բառի տակ :

Էջ 90 . «Բոլոր բաղաձայններից առաջ անփոխիս է մնում առ նախդի-  
րը . . . բացառութիւն են՝ ուսկան , ուռնանալ , առքեմ» : «Արմատական բառա-  
րան»ում ասուած չէ , թէ այս բառերի ուռ , առ մասնիկր առ նախդիրն է :

Էջ 90-91 . «Ռ—ով սկսուող բուն Հայերէն բառ չկայ . եղած մի քանիսը  
օսար Են» , և տրում են օրինակներ . «Առձեռն» բառարանը աւելացնում է «կամ  
համառօսեալ Են» , որ անտեսել է Գիւլյուղացեանը : Եւ իրօք , բազարդը երա-  
զարդ Հայերէն բառն է : Վրիպակներով են արտագրուած օրինակները՝ բա-  
կես (Հրաշակերտ) փոխանակ բակերտ—ի , բանդոս (ցուոյ) փոխանակ բա-  
ղոս—ի , բննոսես փոխանակ բննատես—ի : Պէտք էր «Եւ այլն» դնել բերուած  
օրինակներից յետոյ :

Էջ 91 . Ռահավիրայ բառը բերուած է առանց յ—ի , նոր ուղղագրու-  
թեամբ : Ռահավայ բառը բացատրուած է որպէս «ծոյլ , տկար» , մինչդեռ բառա-  
րանում նրա բացատրութիւնն է «խենթ» :

Նոյն էջում ասուած է , որ Ազաթանգեղոսի կրկնագիր ձևագրում  
հանդիպում ենք յարաջ , մերաւ , ի փարաց ձեւերի . ցանկալի էր ստոյդ էջն  
իմանալ :

Էջ 92 . Որպէս Հայերէնի ածանց նշուած է ւեր . անշուշտ պիտի լինէր  
—ւետ :

Նոյն էջում ասուած է , թէ ւը եզակի գործիականի հոլովակազմիչ է .  
ինչո՞ւ միայն եզակի : Նախընտրելի է գործածել «Հոլովակերտ» բառը : Բայց  
վի մասին խօսելիս յօդուածագիրը 5րդ կէտում զրել է , ո Հնչիւնը ւ տառով է  
զրուում «իրեւե (եզակի — Մ. Մ.) սեռական հոլովի հոլովակազմիչ , երբ բա-  
րըն ուղիղ ձեւում վերջանում է ի ձայնաւորով (սխանչելույ . . . )» . այս արգէն  
բոլորովին չեղաւ . նման դէպքերում ւը այգպիսի անունների բառամիերջի հըն-  
շիւնափոխուած ին է , եւ ոչ թէ «Հոլովակազմիչ» կամ Հոլովակերտ : Յօդուա-  
ծագիրն աւելացնում է . «Աւելայն ըստ երեւոյթին վերջինս այնքան էլ ուժեղ

Տ Շատ անգամ օրինակների կամ տառերի ընդգծումները են եմ տաել :

կանոն չէ», և բերում է օրինակներ, ինչպէս որդոյ փոխ. որդոյոյ: «Պէտք է նշուէքր, որ սա ձեւարանական երեւոյթ է, և եթէ զրիշը ուժ չի գրել, նշանակում է՝ խօսակցական լեզում ի վերջաւորութեամբ անունները եղակի սեռականում պարզապէս ստանում էին ո հոլովիչն առանց իւր հնչիւնափոխութեան: Կամ էլ զրիշն անփութութեամբ էր մոռանում և զիրն այդպիսի դէպքերում: Բայց հաւանական է առաջին ենթագրութիւնը, որպէս հուեւ նման ւ—ների բացակայութիւնը շատ է տարածուած միջնադարեան ձեռագրերում: Այսպիսի օրինակների շարքում բերուած է նաև «Երեսուն և ութ ամոյն»ը Բաղարանի 631 թուականի արձանագրութիւնից. ընդդուած բառից յետոյ յօդուածագիրը փակագծերում աւելացրել է «փոխ. ամոյն», ենթագրելով, թէ զրաբրում տարի զոյականի հոմանիշն է ամի, այնինչ ամ է: «Հետաքրքիր է, —ասում է նա, — որ Լազարեան ձեմարանի «Աւետարանում» հանդիպում է իսով վերջացող բառերի սեռականը անհնչիւնափոխ վիճակում», և բերում է հետեւեալ օրինակները. «...որդիցն, ... որդիովն, ... բարիովն, ... հոզիցն»: Այս ձեւերը յօդուածագրին հետաքրքրող ուղղագրական հարցի հետ կապ չունեն, այլ հին հայերէնի աշխարհաբարացման փաստեր են, որ այս կամ այն հարազատութեամբ զրանցել է աշխարհաբար խօսել սկսող զրիշը:

Էջ 92-93. և և Ն հնչիւնների մասին կարգում ենք. «Առաջինն արտասանուում էր լեզուի ծայրով եւ նուրբ, երկրորդը՝ լեզուի ետին մասով և թանձը էր». ոչ ոքի երրէք չլսած հնչիւնների արտապահութեան մասին այսքան ինքնավստահութեամբ որոշում կայացնելը շափաղանցութիւն է: Ղ—ի մասին ասուած է նաև. «Յունարէն լ—ն միշտ տառազարձուել է դ—ով մէկ մեղք, հելէչց: աստղ» (Էջ 93). այնպէս է ստացւում, որ իրը մեղը բառը յունարէն նոյնիմաստ զոյականի տառադարձումն է, ասողն էլ՝ միւս բառի: Դիւլրուղադեանը համեմատական լեզուարանութեան աշխատութիւններում այդ երկու գրերի մասին կարգացածը չի իւրացրել եւ էութիւնը չի ըմբռնել: Հ. Աճառեանի յօդուածից բացի (Էջ 93, ծան. 8) նրան կարող է օգտակար լինել Մեյէի հետեւեալ ակնարկը. "Remarques sur les 1 de l'arménien classique, — «Դիտողութիւններ դասական հայերէնի լ—երի մասին» (Յուշարձան, 1911, էջ 209 և յաջ), որի հայերէն թարգմանութեամբ կարող է գտնել Մեյէի հայագիտական աշխատութիւնների իմ կազմած ժողովածուի մէջ, որ Համալուարանի հայագիտական կենտրոնը «արտագրութեան է իջնցրէլ», ահա արդէն մի քանի տարի է:

Էջ 93. Ղ—ի զրութեան մասին ասուածները անկապ են և քառոսային, միշտ նոյն բառերի մէջքերումով իրեւ օրինակ, առանց տեսութեան եւ հետեւութեան: Այսուհետ, ի միջի այլոց, կարգում ենք. «Իդ. Աղայեանը վերը նըշուած յօդուածում («Հայերէնի հնչոյթային համակարգի պատմութիւնից») զրում է, որ Առձեռն բառարանում դ—ով սկսուող 41 բառ կայ, որից միայն ինն են ստոյգ»: Գիւլրուղադեանը յաճախ այսպէս է վարուել. չի ստուգել (թերեւ չի կարողացել) իր օգտագործած տեսական զրականութեան ոչ միայն կարծիքները, այլև թուարանական հասարակ թուերը. թողնում ենք, որ ինքն ստուգի «41» թիւը Աղայեանի յօդուածում. բայց «Առձեռն» բառարանում կան դ—ով սկսուող 100ից աւելի բառեր:

Ղ—ի զրութեան մասին խօսելիս Գիւլրուղադեանը զրել է, թէ այն զրում է բառավերջում, բառամիջում ոյ, այ երկրարաւներից յետոյ (Էջ 93): բայց ինձ անհասականալի մնաց թէ, ինչո՞ւ է օրինակների մէջ զրել քուդագոյն, պղնձաձույդ: Զասակացայ նաև այդինք եւ այդեայդ բառերը, որոնց ազրիւրը նշուած չէ. անհասականալի մնաց նաև Լազարեան ձեմարանի Աւեւ-

տարանի «Ետես զնա այլ կին է» նախադասութեան իմաստը իմ բնդղձած է—ի պատճառով : Ի գետ ասեմ , որ նշուած են այս Աւետարանի միայն էջերը . զիւանք , որ մեր հին ձեռադրերի մի մասում Աւետարանների զլիարաժանութեր եւ տնատումներ չկան . սակայն դրանք օգտագործած եւրոպացի հայադէտները նեղութիւն են կրել նշելու ոչ միայն ձեռադրի էջը , այլեւ բերուած օրինակի ստոյզ տեղը՝ զլիին եւ առն համարն ըստ հրատարակութիւնների . այսպիսով հնարաւորութիւն է տրւում բնթերցողին ստուգելու բերուած փաստերը : Նոյն էջում (93) «զայդա» բառը պէտք է լինի հաւանարար «զայդա» , «ընդզապտերա» — «ընդ զապտերա» : Նոյն էջում յայտարարուում է , թէ «Ղ—ով է գրուած ամենուրեք նաեւ այլ շաղկապը» , բայց չի տառւած՝ ո՞րտեղ :

Էջ 93-ը «Ա. Բաղրատունին զրում է , թէ եթէ այլը շաղկապ է , զրում է Պ—ով , իսկ եթէ գերանուն է՝ Լ—ով , բայց մեր բերած օրինակներն այդ չեն վկայում» . ահա ինչ է զրել Բաղրատունին (Հայերէն քերականութիւն ի պէտք դարդացելոց , էջ 4 , թիւ 9) . «Լիւ (լ զիրը — Մ. Մ.) կրկին է . մի թանձր , որպէս այլ , որ է՝ որիշ՝ լալ և այլն . և միւս լիրկ և նուրբ , որ զրի զիւն այլ միւս մակակիսու , որպէս այլ , որ է՝ բայց՝ կարծեմ մեկնարանութիւնն աւելորդ է : «Աւելի ճիշտն այն է , —սովորեցնում է Գիւլրուղազեանը , — որ այս երկրարարաններից յետոյ սովորարար զրում է դ : Սրանց պիտի աւելացնել նաեւ զայրագիտի բայր , որ կազմուել է զայրի եւ զիել բայրից՝ զայրագիտի > զայրագիտի , զայրակիտի» (էջ 93-94) : Եթէ անձամբ բացած լինէր Բաղրատունու Քերականութեան իմ նշան տեղը , այնտեղ պիտի տեսնէր չչիլ . լուզամ , յելուզակ , պալատն » և ուրիշ բառեր , որոնք ձեռադրերում հանդիպում են պարզ կամ մակակէտով Պ—ով , որ այ եւ ոյ երկրարարաններին չի յաջորդում : Իսկ զայրագիտի բայն այստեղ անտեղի է , քանի որ այն միշտ դրուել է Պ—ով . իսկ ինչ վերաբերում է ստուգարանութեանը , Հր . Աճառեանը բաւարարուել է «Հայերէն արմատական բառարան»ում առաջարկուած ստուգարանութիւնները մէջ բերելով , առանց առելու , թէ ո՞րն է ճիշտը . զրանց մէջ չկայ Գիւլրուղազեանի ստուգարանութիւնը :

Հենց քիչ առաջ յօդուածից մեր կատարած մէջը բրումից յետոյ («... զայթակել») , բայց նոր պարբերութեան մէջ աւելացուած են հինգ տող , որոնք կատ չունեն Ղ—ի զրութեան հետ . «Եկատում են խուլի փոխարէն նշեղ խուլի զրութիւն : Մատենադարանի № 10100 ձեռագրում զրուած է . «Լուսք Եփրարայ» (էջ 6) . «Բէթզէնմ տուն Եփրարայ» (նոտ .)» (էջ 94) . մինչեւ հիմա էլ չեմ հասկացել յօդուածագրի միտքը եւ օրինակների նշանակութիւնը : Թերեւս «Տ—Թ զրութեան մասին» կար , որ խմբադրութիւնը կրծատել է : Նա չարունակում է տող առ տող . «Ա. Քոլանջեանը վերոյիշեալ յօդուածում զրում է , թէ կիւրեղ Երուսաղէմացու պատափիկում զրուած է . Զուրն որ ի վիմէն խոսեցաւ» (փոխ . Հոսեցաւ) ...» . կարծէք այս օրինակը հ—ի «իս» արտասունութեան եւ բատ այնմ զրութեան մասին է , բայց խմբադրութիւնը զարձեալ կրծատել է թերեւս : Սակայն զարձեալ չեմ տեսնում խոսեցաւի եւ Եփրարայի կազը հինգ տողնոց նոյն պարբերութեան մէջ : «Բաներ»ի խմբադիրը կամ նրա տեղակալը թերեւս միշտ է կարգացել Գիւլրուղազեանի երկարաշունչ յօդուածը , որի ներքին կապն առանց այլ էլ թոյլ է : Ի գէտ նկատենք , որ վերջինս զարձեալ հաւատ է ընծայում մէկ ուրիշի , այս անդամ Քոլանջեանի «զրած»ին , փոխանակ նշուած աղբիւրն անձամբ տեսնելու եւ փաստերն ստուգելու :

Էջ 94. Եւ է ձայնաւորների զբութեան մասին խօսելիս նաև զրել է . «Սկզբում այս հնչոյթների տարրերութիւնն ամանակային է եղել, ե—ն ե—ից մի քիչ աւելի երկար է հնչուել» . ո՞վ է լսել դրանց սկզբնական, այսինքն՝ հինգերորդ զարի արտասանութիւնը : Ահա երկու կարծիք՝ հակառակ այստեղ ժեր կարգացածին . ըստ Մեյէի (Esquisse, Վիեննա, 1936, էջ 40-41) . Եւ է ձայնաւորները դասական զբարարում քանակային (կամ ամանակային) տարրերութիւն չեն ունեցել . ըստ Էդ . Աղայեանի (Գրարարի քերականութիւն, հատոր Ա, էջ 97), «Դասական հայերէնում ձայնաւորների քանակային տարրերակում զոյտութիւն չունի . ընդունուած է ասել, որ զբարարում երկար ձայնաւորներ չկան» :

Գիւլբուղաղեանը թէև տարրերում եւ է զբարարեան ձայնաւորներն առաջինի «մի քիչ աւելի երկար» լինելով, բայց զբում է նաև հետեւեալը, որ հակառակ է նրան . «Այն հանդամանքը, որ մեր այս ե—ն ու ե—ն վրացերէնում արտայայտուել են ե—ով, վկայում են (փոխ . «Է» — Մ. Մ.), որ զրանք է էին» (էջ 94) : Ե՞րբ : Եւ յաւելեալ ապացոյց է բերում հետեւեալը . «Սրան պիտի աւելացնել այն փաստը, որ ե զարից եղանակ, երկու, երկար բառներ մեզ հասել են յեղանակ, յերկու, յերկար ձեւով» (էջ 94) . բերում էն օրինակներ թէոնի (փոխ . Թէոնի — Մ. Մ.) «Յաղակս ճարտասանական կրթութեան» գրքից (Ե՞րբ եւ ո՞ւր է լոյս տեսել, եթէ տպագիր է) : Դարձեալ միջնադարեան ձեռագրերի սխալագրութիւնները հիմք են ծառայել յօդուածաղրին եւ զարի ուղղագրութեան համար : Բացի այդ, «Զի յերկուց խառնուածոց ունի պատուականութիւն յերկայնուրին» օրինակում (եթէ երկու բառի համար է բերուած), յերկուց ձեւի յ—ն կարող է բացառականի ի նախողիրը լինել : Իսկ (յ)երկայնուրին բառը յօդուածաղրի երեք բառերից չէ, ինչպէս չէ նաև օրինակներից մէկի յերկարագեսցի բայց :

Էջ 95. «Հին հայերէնում . . . ո, ա—ով վերջացողները (բառերը — Մ. Մ.) կամ ներփակում էին յ—ով կամ օտար բառեր էին» . ու անմիջապէս չեն յիշում սա, դա, նա գերանուններն ու նրանց սեռական եւ տրական հոլովաձեւերը, ահա, ապա, եղակի հրամայականի ձեւեր՝ պատմեա, աղա, մատո, օտար յատուկ անուններ՝ Շաղիտա, Ասիա, բն : Սրանց մասին խօսւում է էջ 99ում :

Էջ 95. «Ե տառով զբում են հետեւեալ վերջահնչիւնները, եզ, հեզ, արեզ, եզ՝ բեհեզ, հեզ, մեզ, եղ» . քանի որ, ըստ յօդուածաղրի յայտարարութեան, ե—թ զարերում, կամ նոյնիսկ «Ե զարում այս երկու (ե և է) տառերը համարեա նոյն հնչումն ունէին», ուստի կարող ենք առարկել՝ իսկ հեզ կամ հեզ, հեն, մեզ, մեզ, դեզ եւ այլն : Կամ նրա եմ—ի զիմաց՝ թիմ, ունենք դիմ, նրա ես—ի զիմաց՝ երես, ունենք պէս . իրը թէ երբ . . . տառակապակցութեամբ «լիրջացող բառեր չկան» (էջ 95) . իսկ թիմ, աղբե՞րք «աղրիւրներ» :

Էջ 95. Է տառով սկսուող օրինակների մէջ կարդում ենք նաև էւ էոց, որոնք չկան Առձեռն բառարանում . ցանկալի էր խմանալ նրանց խմասուները եւ զործածութեան տեղը : Սովորահայ զբարարագէտները եւ նրանց հետեւողութեամբ միւս լեզուարանները շարունակում են կրկնել, թէ «Է տառը զբում է . . . իրեւե բայի անցեալ կատարեալի նախայաւելուած նեցուկ, եթէ այդ սկսուում է ձայնաւորով . էանց, էարի, էառ, էաւծ եւ այլն», առանց նրկառելու, որ այդ ձայնաւորը միայն ա կարող է լինել, ինչպէս այս օրինակներում : Բացի այս, Գիւլբուղաղեանը պնդում է, թէ «Այսակ էլ ե—ն երկար է, ի տարրերութիւն բառակղբի ե—ից . եհատ, եղիտ» (էջ 95) . արդէն ասա-

ցինք, որ ականաւոր լեզուաբանների կարծիքով հայերէնը հինգերորդ դարում կարճ և երկար ձայնաւորներ չեն ունեցել: «Ետառը գրւում է... բառավերջի երկու բաղաձայնից առաջ, սակայն միայն եղէզն, թէշկ բառերում, մի ժամի դերանունների բացառական հոլովի վերջաւորութիւններում: ի ձէնջ, ի ժէն, ի մէնջ, յոդնակերտ վերջաւորութիւն ունեցող միավանի բառերում. չէնք, օրէնք...» (էջ 95-96): Գիւլուղաղեանը իր յօդուածում շատ յաճախ դրում է անուշաղրութեամբ, ինչպէս այս տողերում, ուր ընդդումները ես եմ արել. Հնդերոսպազէտներից ոչ մէկը չի ասել, թէ նշուած զերտնուանական ձեւերում —էնջ, —էն մասնիկները բացառականից վերջաւորութիւններ են: Բացի արդ, նա խօսում է բառավերջի երկու բաղաձայնից առաջ է գրուելու մասին, իսկ նրա օրէն—ք կամ օրէն երկվանկը չի համապատասխանում «յազնակերտ վերջաւորութիւն ունեցող միավանի բառերում» նախաղայմանին: Անուշաղրութեան կամ յօդուածի «մկրատման» հնտեւանք է նաեւ այս յայտարարութիւնը: «Ե գրւում է... բառավերջի մէկ բաղաձանյից առաջ, ինչպէս և տառի կապակցութեամբ ասուեց, օրինակ՝ ...մէզ...» (էջ 96). Հենց այս բացառող զէպքի մասին նա ոչինչ չէր ասել ե—ի գրութեան մասին խօսելիս, ուստի վերեւում նրան արեցի այս բառի առարկութիւնը: Կարծեմ արդէն տեղն է ասելու, որ ե—ի եւ ի—ի ուղղագրութեան մասին նրա սահմանած կանոնները որիսալ ելակէտ ունեն. նա —եզ, —ել...—էն, —էպ, —էզ...վերջնահնչեաններից զնում է այդ նոյն հնչիւնների —եզ, —ել...—էն, —էպ, —էզ...գրութեանը. այդ նոյնը կը լինէր, եթէ ասէինք, որ հեզ—ը գրւում է հինդերորդ—իններորդ դարերում հեզ, իսկ մէզ—ը՝ մէզ:

Գիւլուղաղեանը տերութիւն բառը՝ ե—ով, բերում է ե—ի փոխարէն ե—ի գրութեան «չեղում»: սակայն նա պէտք է յիշեցնէր, որ Մեյէն եւ Աճառեանը ենթագրել են, թէ այդ բառի հնագոյն գրութիւնը ե—ով է հնագոյն ձեռագրերում, եւ ոչ անտեղի. այս մասին նա կը կարդայ մի օր, երբ (կամ եթէ երբ եւ իցէ) լոյս տեսնի Մեյէի հայտիտական ժողովածուն հայերէն թարգմանութեամբ<sup>6</sup>: Նա կը տեղեկանայ նաեւ հայտկաների այն կարծիքին, որ եւ ի լծորդութեան բայերի անցեալ անկատարում ե—ի փոխարէն ե է գրուած հնագոյն ձեռագրերում եւ, ըստ այնմ, Մեյէի դրաբարի քերականական աշխատութիւնների մէջ, ուր տրուած է պատճառաբանութիւնը: Նոյնպէս եւ թէ, երեւ շաղկապում: Գիւլուղաղեանը յայտարարում է «Աւետարանում յաճախ ե—ով են գրուած նաեւ՝ որպէս... բառերը» (էջ 97). Հաւանաբար խօսքը Լազարեան ձեմարանի Աւետարանի մասին է, որի էջերն անգամ նշանակուած չեն: Այլեւ. «Երբեմն միեւնոյն ժամանակաձեւը միեւնոյն նախաղասութեան մէջ գրուած է թէ եւ թէ եւ տառերով: Օրինակ՝ ՚ի լեբինս ազաղակնը եւ կոծէր» (էջ 97). նա միայն զրանցել է այս փաստը առանց իր խօսքն առելու: Անչուշտ այս համարում է «չեղում»: ես կ'առէի զրչի անուշաղրութեան հետեւանք: Բայց նա զրել է. «Այս օրինակները վկայում են, որ ե-թ դարերում ե—է զրերը իրենց հնչիւնով շատ չէին տարրերում, որի պատճառով էլ զրբիչները խառնել են նրանց զրութիւնը» (էջ 97). եթէ զեռեւս նոյնիսկ ե զարում այդ տառերով զրանցուած հնչիւնները շատ կամ քիչ չէին տարրերում, ապա Մաշտոցը ինչո՞ւ է նեղութիւն կրել եւ է զրերն ստեղծելու:

էջ 97: «Ը տառը գրւում է... բառամիջում՝ բաղագրեալ բառերում, երբ երկրորդ բաղագրիչը ը տառով է սկսում. աւրշտաւրէ... միջնդիմիոջէ».

6 Մինչ այդ Մեյէի եւ Հք. Աճառեանի կարծիքը տե՛ս իմ «Անքուան Մեյէ եւ Հք. բաշեայ Աճառեան», Սիմոն, 1972, թիւ 3—4, էջ 143:

առաջինը «բազաղրեալ բառ» չէ, այլ աւր ըստ արքէ «օրբ օրին»։ ոչ էլ երկրորդը, որը անկասկած մի ըստ միոցէ չ այնաեղ, որտեղից սխալ է արտադրուած (աղբիւրը նշուած չէ)։ Գրուած է, թէ բառակղբում ստ— հնչիւնախմբից առաջ ը չի գրում (էջ 97)։ բայց բազաղրեալ բառերի մէջ ը—ի դրուելուն օրինակ բերուած է անըստերիւր բառը (որին Գիւլբուղաղեանը Առանուն բառարանից կարող էր աւելացնել անըստգտանելի բառը)։ այս օրինակը հակառում է նրան, քանի որ, ըստ նրա, բառն է ըստերիւր։ Նա այս կեղծ օրինակը չէր բերի, եթէ բառարաններում որոնէր նաև անըստերիւր եւ այս բառի արժանութը։ Ասուած է, որ սպ, շպ, նկ հնչիւնակապակցութիւններից «առաջ լսուած ը—ն չի գրում» (էջ 97), բայց օրինակ չէ բերուած։ Գիւլբուղաղեանն ինչպէ՞ս կ'արտասանէր արգեօք այդ հնչիւնակապակցութիւններով բակըսող բառերը՝ սպազզաց, սպամ...շկրիմ, շկարօկ առնեմ եւ այլն, շպար շպիտ...։

էջ 97։ «Բ զադանավանկ հնչումը հին հայերէնում ապացուցել է Մելչէն։ Նա նկատել է, որ զրոց լեզուում միավանկ բայերը անցեալ կատարեալում ստանում են ե կամ է յենարանը (ետես, էտո), իսկ բազմավանկ բայերը չեն ստանում (սիրեաց, բերի)։ Քանի որ մնաց, զնաց, բերից, զրից բայերը ե չեն ստացել, բազմավանկ են, արտասանուել են մրնաց, զրնաց, զրեց, բրից (այսպէս — Մ. Մ.)։ Միւս կողմից՝ ապառնիում երկվանի բայերը ունենում են ցց...իսկ եռավանի բայերում մի ց—ն փոխում է ս—ի...» (էջ 97)։ Այս շիրա-փլաւը եղբափակուել է հետեւեալ տողերով։ «Մելչէի այս մէթոդով էլ Աճառեանն է ապացուցում, որ ստ...շտ կապակցութիւններից առաջ ը է հրնչուել», որով Գիւլբուղաղեանը կուահել է տալիս, թէ ինքն անձամբ Մելչէի աշխատութիւնը, որի վերնագիրն անդամ չի լիչում, չի կարգացել։ Ինչպէս Աճառեանը շի «ապացուցել» վերոյիշեալ յեղուական կամ արտասանական փաստը, այնպէս էլ Մելչէն «չի ապացուցել» «Բ զադանավանկ հնչումը հին հայերէնում»։ Գաղտնավանկերը ճիշտ արտասանելու համար Հայերս շենք բապասել այս երկու պատկառելի գիտնականների «ապացուցման»։ Բայց զանք Գիւլբուղաղեանի կողմից Մելչէի մտքի եւ փաստերի ազաւազման։ Նա թերես մեղադրի իր աղբիւրը՝ Աճառեանի չնշուած մէկ էջը՝ դա նրա դորձն է։ Նախ՝ «զրոց լեզուան մեղ 19բգ դարն է յիշեցնում։ Մելչէն (Esquisse, 1936, էջ 53, եւ ուրիշ հայագիտական ուսումնասիրութիւնների մէջ) միշտ խօսում է զասական հայերէնի կամ զասական գրաբարի մասին։ Նա չի ասել պարզապէս կամ ընդհանրապէս «անցեալ կատարեալում», ինչպէս զրել է Գիւլբուղաղեանը, այլ անցեալ կատարեալի եզակի երրորդ դէմքում, եթէ արժատական ու միավանկ է, եւ իբրեւ օրինակ չի տուել բերի առաջին դէմքը սիրեաց—ի կողքին, ապացուցելու համար, որ «բազմավանկ բայերը ե կամ է չեն ստանում», ինչպէս քիչ առաջ կարգացինք յօդուածում։ Նա չէր կարող ասել նաև, թէ «զրից, բերից բայերը ե չեն ստացել», որովհետեւ գիտէր, որ զասական գրաբարում ունենք զրեաց եւ (հ)բեր։ Միւս կողմից՝ նա չի ասել, թէ երկվանի բայերն ապառնիում ունենում են ցց, այլ «Միավանկները ստորագասականում (ապառնիում) պահում են ցց հնչիւնականումը» (էջ 53)։ Զի զրել նաև, թէ «իսկ եռավանի բայերում մի ց—ն փոխում է ս—ի», այլ՝ «Գնացցին ձեւն ունի բազմավանկներին յատուկ աց հնչիւնական փոխութիւնը» (ն. տ.)։ Բուն ստորագասականի կազմութեան մասին խօսելիս, Մելչէն աւելի մանրամասն բացատրում է, որ նկատի է առնեւել նաև անցեալ կատարեալի հիմքը, որից կազմում է երկրորդ ապառնին, ց վերջաւանչիւնի արժատական լինելը։ Գիւլ-

բուզաղեանը իրբեւ զառական զբարարի կամ «զրոց լեզուի» օրինակ է բերեւ խօսեցիս սիստ ձեւը (Էջ 98. 1) փոխ խօսեցիս :

Յ—ի ուղղագրութեան մասին կարգում ենք. «Մաշտոցի ժամանակը յ—ն ամենուրեք հնչուող տառ է եղել, նրա հնչման փոփոխութիւնները հետագայ զարերի հետեւանք են» (Էջ 98). «...Դա երեւում է նրանից, որ... ը հայերէնի յ—ով սկսուող բառերը տառադարձել են կամ չ—ով կամ յ—ով (Հայ. սառայ > յունարէն Ածշչչչ »· օրինակն անահասկանալի է : «զ) Օտարազդի ա—ով վերջացող բառերը հայերէնում յ—ով են վերջացել : Առարկան կահա, avila, satana, luma, gadsa, chuka, amira, բառերը հայերէնում զրուել են քահանայ, արեղայ, սատանայ, լումայ, կաթսայ, չուկայ, ամիրայ» (Էջ 99). Գիւլուղաղեանն այս յ—ն բացատրում է նրանով, որ հայերէնում բառերը ա—ով «չեն վերջանում» : Եթէ Գիւլուղաղեանը Աճառեանի «Արմատական բառարան»ից կամ «Հայոց լեզուի պատմութիւն» աշխատութեան տուաջին հատորից (Էջ 336—342) ճիշտ արտազրիք ասորական բառերի լատինական տառադարձութիւնները, կը նկատէր, որ իր նշած բոլոր բառերը վերջում ունեն երկար ա, որ հայերէնում տառադարձուել է այ—ով : Ընդդեցի նրա միւս սիստ արտադրութիւնները :

Էջ 99. «Յ—ն զրում է . . . Յառամիջում՝ ա և ո ձայնաւորներից յետոյ, (աղզայնոյ, ալսոյիսան, այդր, այժմ, ամարայնոյ յոյժ, փոյթ, բոյլ, բարեմոյն, եւ այլն)»· այս ու «եւ այլն» բառերի մէջ տեղին կարելի է համարել միայն երկրորդը . Գիւլուղաղեանը ցանկացել է յիշեցնել, որ բառամիջում ա և ու նրանց յաջորդող ձայնաւորի միջեւ զրում է յ, ինչպէս աղայի, ընձայել, հոյակապ, որոնք կդ. Աղայեանի հայերէն զրուած եւ յօդուածադրին մատչելի «Գրաբարի քերականութեան», հատ. Ա., Էջ 190, օրինակներն են :

Էջ 99, երկիւ ձեւը ներկայացուած է որպէս հրամայական . զրարարում երկիր է՝ երկնչիմ բայից . տե՛ս զրաբարի որեւէ ձեռնարկ : «Յառամիջում յ չեն ունենում . . . ը) սա, դա, նա, սորա, դորա, նորա, սոցա, նոցա, քո գերանուններն իրենց ձեւերով»· այս շարքում մոռացուած է դոցան . իսկ «իրենց ձեւերով» բառերի տակ ի՞նչ է թաքնուած : «Եւ. Աղոնցը բացատրում է, թէ հետեւեալ բնիկ հայերէն բառերի վերջին յ—ն ընկել է, որովհետեւ նրանք չունեն իրենց թեք ձեւերը . . . եւ այլն . զրուած է վերջակէտ, անցում կատարուած նոր տողի, եւ ընթերցողը զրկուել է Աղոնցի բացատրած այդ ընիկ հայերէն բառերը տեսնելուց . ոչ էլ աղբիւրն է նշուած :

Էջ 100, յ տասի «անհարկի կիրառութիւններ»ը պարզունակ եւ ոչ զիտական ձեւով պատճառարանելուց յետոյ յօդուածազիրը ասել է . «Պարզ բառերում (օր. յազեցան) յ—ն զրել է (զրիչը — Մ. Մ.) այն նմանեցնելով (ի՞նչը — Մ. Մ.) բառամիջում յ տառն ունեցող բառերին» . Հարց եմ տալիս՝ յազեցան բառաձեւն ինչպէս կարելի էր զրել առանց յ—ի:

Գիւլուղաղեանը հաւանաբար չի կարգացել Մեյէի «Հայերէն Աղայեանի քանի մը հին ձեռադրաց զրչութեան վրայ զիտղութիւններ» շատարժէքաւոր յօդուածը, ուր տեղեկութիւններ կը զտնէր եւ—իւ զրութեան և ուղղագրութեան ուրիշ հարցերի մասին (Հանդէս Ամսօրեայ, 1904, թիւ 7 եւ յաջ.) :

Էջ 101, երկրաբառների զրութեան մասին խօսելիս նա կդ. Աղայեանի վերագրում է հետեւեալ մտքերը, որոնք անհասկանալի են . չենք էլ կարող սուուզել, որովհետեւ Աղայեանի աշխատութեան էջը նշուած չէ . «Աղայեանը զրում է, թէ Ու հնչոյթը նոյնպէս երեք ենթահնչոյթ է ներկայացնում» 1)

ձայնաւոր (տուն, դու, արու) : 2) Երկրարբառի ոչ վանկարար բազաղրիչ՝ ու եւ և տառերով (?) : Ու—ն ուժգնացող երկրարբառում (ուտ, ուի, ուե), իսկ ե—ն՝ բուլացող (աւ, եւ, իւ) . 3. բաղաձայն՝ վ (վար, վագֆ, ծով, նաւավար) եւ ւ (աւագ, կաւահող, սեաւ, թեւ, թիւ) տառերով» (ընդդուածները անհասկանալի են ինձ) :

Էջ 101, յաջալիքալ անցեալ դերսայը իրրեւ ենթակայական դերայի օրինակ է բերուած . նոյն տեղում զապանողսն բառի մէջ հաւանաբար վրիսուկ կայ :

Էջ 102, «Ուղղագրական այլ շեղումներ» ենթավերնագրի տակ կարդում ենք . «Նկատում են . 1) Բառերի հնչիւնափոխ ձեւեր, որոնք դարձեալ բարբառային արտասանութեան հետեւանք են : Օրինակ՝ Լաղարեան կետարանում՝ զգոշ (փոխ, զգոյշ) . . . ձեւերին» : Ի միջի այլոց ասենք, որ այս նախադասութեան մէջ «Հանդիպում ենք» բայց հաւանաբար դուրս է ընկել յօդուածի շարուածքի ժամանակ : Սակայն հիմնական դիտողութիւնս այն է, որ եթէ այստեղ բերուած ձեւերը բարբառային են, ուստի զրանց ուղղագրութիւնը չենք կարող «ուղղագրական շեղումներ» համարել այս բառերի բուն իմաստով . զրիչը զրել է բայ ժամանակի կամ իր արտասանութեան, եթէ այդ ձեւերը նրա անփութութիւնից ծնունդ չեն տաել : Այս պարբերութեան վերջում յօդուածագիրը դարձեալ ընթերցողին հրամցնում է մի աղաւաղ արձանագրութիւն, որի տեղն էլ սիսակ է նշուած . «Տարեւի Զ դարի մի տապանագրում զրուած է . Զգրող ժամացուցիս յիշեցէք մասն քաղցր և անուշատես զաւակին մեր» (Դիւ. 2, 88) : Բացում եմ Դիւան Հայ վիմագրութեան, պրակ Բ, Էջ 88, թիւ 253 . «ՍիՍիկն. Սիկնի Վլեւք . արտաքուստ հարաւային պատի արեւմտեան մասի կենտրոնում . արեւի ժամացոյցի տակին . 2 տող . ԶԳՐՈՂ

ԺԱՄԱՅՈՒՑԻՍ ՅԻՇԵՑէկք ի ՏՐ . ԱՎ ՔՍԱՍԻԹՔ ՀԱՅԹԻ ԵՒ ԵՂԲԱՐՔ» : Իսկ Գիւլբուղաղեանի խմբագրութեամբ աւելացուած «ժմասն քազցր եւ անուշատես զաւակին մէր» բառերը Դիւանում երկար փնտուցինք ու չդատանք : Մարդ կարո՞ղ է այսքան անտարբեր լինել իր զրածի կամ արտազրածի իմաստի նկատմամբ, որքան Գիւլբուղաղեանը :

Էջ 103—104, «Մեծատառի կիբառութիւնը» ենթավերնագրի տակ յօդուածագիրը պաշտպանում է այն տեսակէտը, թէ Մաշտոցը իր ժամանուկին ստեղծել է նաեւ հայերէնի փոքրատառերը . «Մովորական դրութիւնների համար պիտի որ օգտագործուած լինէին փոքրատառով ձեւերը, իսկ մատենագրութիւնն ու պաշտօնական գրութիւնները՝ մեծատառով» (Էջ 104) . Եւ իրը «Այժմ դիտնականների մի զգալի մասը վերջին կարծիքին է» : Պատճառաբանուած չէ, թէ ինչո՞ւ «ժմատենագրութիւնն ու պաշտօնական գրութիւնները» պէտք է մեծատառերով գրուէին . ասուած չէ նաեւ, թէ որո՞նք են այդ գիտնականները : Նա վկայակոչում է Կ. Ղաֆաղարեանի «Դուրին քաղաքը» աշխատութեան մէջ բերուած մի արձանագրութիւն, ուր փոքրատառ ա գիրը զլիիվայր է զործածուած մեծատառերի կողքին . արդէն դիտեմ, թէ որքա՞ն վստահելի են յօդուածագրի տեղեկութիւնները . իսկ ա զրի այդ գրութեան պատճուը անպայման այլ կերպ է բացատրելի : Ընդհանրապէս «գլխաղղիր, մեծատառ» գրերի մասին ասուածները խառնաշփոթ են ստեղծում . Գիւլբուղաղեանն էլ չի տարբերում այդ բառերը, թէեւ զրանց տակ տարբեր տառեր է նը-

կատի ունեցել, այդ թւում նաև զարդարերը, որոնք «դիխազիր» էլ են կոչւում:

Շատ զարմացայ, երբ նա հին ձեռադրերի մէջ տողադարձի՝ այսօրուայ հասկացողութեամբ կիրառութիւն օրինաչափ դէպքեր է որոնում և խօսում սխալ ու ճիշտ վանկարաժանումների մասին։ Տողադարձ ենթավերնազրի տակ գրուած նրա ճիշտ մտքերից մէկը հետեւեալն է։ «Գրիչը տեղ շահելու համար է այդպէս վարւում» (էջ 104)։

Եթէ Սիրաք Գիւլրուզազեանն իր ամբողջ դռկտորական դիսերտացիան այս յօդուածի պէս անփոյթ զրի, դիսերտացիայի պաշտպանութիւնը մի քիչ կը դժուարանայ, որովհետեւ երեսնն ունի աւելի լուրջ և դիտակ լեզուաբաններ։

### ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ

Երուսաղեմ